NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

27 հունիսի 2018 թվականի N ՑՊ-015-06/18
ք. Երևան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԱՊԱՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Օպերատոր) «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 21-րդ գլխի 107 կետի 5) ենթակետի, ինչպես նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառելիության ժամկետով, տարեկան 7.25% անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնային, 80,000 (ութսուն հազար) հատ անվանական պարտատոմսերի (ARBKB9) շրջանառության ժամկետը լրանալու հանգամանքը և Օպերատորի «Բորսայական ծառայությունների դեպարտամենտի» կողմից 2018 թվականի հունիսի 26-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 107 կետի 5) ենթակետի և Օպերատորի Կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառելիության ժամկետով, տարեկան 7.25% անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնային, 80,000 (ութսուն հազար) հատ անվանական պարտատոմսերը, որոնց շնորհվել է AMARBKB29ER0 ծածկագիրը և ARBKB9 հապավումը, ապացուցակել և առևտուրը դադարեցնել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, ինչպես նաև դադարեցնել դրանցով հասցեական և ռեպո գործաքներ կնքելու թույլտվությունը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և 1 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին Առևտրային համակարգի միջոցով տեղեկացնել Շուկայի մասնակիցներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am